

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ընտրություններին առնչվող օրենսդրության վերաբերյալ

Ստորև բերվող առաջարկությունները ներառում են ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի և այլ միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ դիտորդական առաքելությունների, ինչպես նաև տեղական դիտորդական կազմակերպությունների վերահսկողության արդյունքում ձևավորված մի շարք կարևոր առաջարկներ:

#### 1. Կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ստեղծում

Գործող ընտրական օրենսգրքի կարգավորումներով խստ սահմանափակ են քաղաքական կոալիցիա կազմելու կուսակցությունների հնարավորությունները և ժամկետները: ԸՕ 97-րդ հոդվածի համաձայն՝ ընտրական արգելապատնեշները հաղթահարած միայն երեք կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) կարող են ձևավորել կոալիցիա՝ 6-օրյա ժամկետում: Մինչդեռ պառլամենտարիզմի պարագայում ընտրական արգելապատնեշները հաղթահարած ցանկացած թվով կուսակցություններ (դաշինքներ), պետք է իրավունք և հնարավորություն ստանան կոալիցիա ձևավորելու, ընդ որում քաղաքական բանակցությունների համար ունենալով ավելի երկար ժամկետներ: Բացի այդ, 2-րդ փուլի դեպքում նախատեսված է, որ ընտրությանը մասնակցում են այն երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Սակայն Սահմանադրությամբ սահմանված կայուն մեծամասնության պահանջը մեղմելու նպատակով առավել նախընտրելի տարբերակ է, որ երկրորդ փուլին մասնակցեն նաև առաջին փուլին մասնակցած բոլոր քաղաքական ուժերը, ընդ որում նաև՝ նախապես կազմելով կոալիցիաներ:

#### Առաջարկություններ

- Հանել կոալիցիա կազմելու կուսակցությունների/դաշինքների քանակային սահմանափակումը:
- Երկարաձգել առաջին փուլից հետո կոալիցիա կազմելու ժամկետը՝ սահմանելով մինչև 15 օր:
- Ամրագրել առաջին փուլին մասնակցած բոլոր քաղաքական ուժերի՝ 2-րդ փուլի ընտրությանը մասնակցելու իրավունքը:

#### 2. Ընտրակաշառքի և ճշումների վերացում

Թեև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով, սակայն Ընտրական օրենսգրքով ներմուծվեց «տարածքային ընտրական ցուցակ» հասկացությունը, որով ամբողջությամբ խեղաթյուրվեց դասական համամասնական ընտրակարգը: 2017թ. խորհրդարանական ընտրությունները բացահայտեցին նորամուծության արատներն, ինչի արդյունքում մի շարք խոշոր գործարարներ ընտրակաշառքի, ընտրողների աշխատանքային, ծառայողական կամ այլ կախվածությունն օգտագործելու և ճշումներ գործադրելու միջոցով ձեռք բերեցին պատգամավորական տեղեր իրենց համար, ինչպես նաև ապահովեցին ՀՀԿ հաղթանակը: Ըստ էության, այս համակարգի միջոցով ընտրակաշառքը և վարչական միջոցների չարաշահումները համատարած բնույթ ստացան՝ տեղական և համապետական

մակարդակում: Հարկ է նշել, որ միայն ընդհանուր ցուցակով քվեարկած քվեաթերթիկների համաձայն հաղթող կուսակցություն էր հանդիսանում ԲՀԿ-ն և ոչ թե ՀՀԿ-ն և վերջինս առաջին տեղում էր հայտնվել բացառապես խոշոր գործարարների ստացած ձայների շնորհիվ:

Բացի այդ, 2017թ. ապրիլին խորհրդարանական ընտրությունների բացահայտեցին խնդրահարույց մեկ այլ պրակտիկա, երբ ժողովրդի քվե ստացած պատգամավորները ընտրություններից անմիջապես հետո վայր դրեցին մանդատները, ինչը կարող էր հետևանք լինել ներկուսակցական ճնշումների:

### **Առաջարկություններ**

- Վերացնել տարածքային ընտրական ցուցակները՝ ապահովելով դասական համամասնական համակարգը: Որպես հաջորդ քայլ՝ կարող է լինել ներկուսակցական ռեյտինգային համակարգի ներդրումը:
- Օրենսդրորեն սահմանափակել որոշակի ժամկետում (օրինակ՝ 6 ամիս) մանդատից հրաժարվելու պատգամավորի իրավունքը՝ բացառությամբ գործադիր կամ դատական իշխանության մարմիններում պաշտոնում նշանակվելու դեպքերի:

### **3. Կրկնաքվեարկության բացառում**

Ընտրացուցակների մաքրությունը և դրանց նկատմամբ հանրության վստահությունը մեծագույն խնդիր է, քանի որ ընտրողների ռեգիստրը կազմվում է ըստ քաղաքացիների հաշվառման փաստի, ինչը բացակայող անձի փոխարեն քվեարկելու հնարավորություն է տալիս: Հետևաբար, նպատակահարմար է առանձնացնել ընտրողների ռեգիստրը բնակչության պետական ռեգիստրից: Այսինքն՝ ընտրողների ռեգիստրում ընդգրկվելու չափորոշիչը պետք է լինի ոչ միայն ՀՀ-ում հաշվառված լինելը և ընտրելու իրավունք ունենալը, այլև ընտրություններ նշանակելու օրվա դրությամբ, ինչ-որ ժամկետում, օրինակ՝ վերջին 6 ամսում, ՀՀ-ում գտնվելը: Սա նշանակում է, որ նշված ժամկետից ավելի երկար ժամանակով ՀՀ-ից բացակայող ՀՀ քաղաքացիները ընտրողների ընդհանուր ցուցակի մեջ չեն ներառվի, իսկ քվեարկության օրը ՀՀ գալու դեպքում կմասնակցեն քվեարկությանը լրացուցիչ ցուցակում ընդգրկվելով:

Ընտրացուցակների մաքրության վերաբերյալ հանձնարարականներ տրվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2007թ. խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցով՝ առաջարկելով շարունակել ընտրողների ցուցակի ստույգությունը բարելավելու ուղղությամբ գործադրվող ջանքերը, այդ թվում՝ առկա այլ հանրային գրառումների հետ հանդիպակաց ստուգումների (“cross-checking”) միջոցով<sup>1</sup>, ինչպես նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Փորձագիտական խմբի՝ 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի<sup>2</sup> և 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների վերջնական զեկույցներով<sup>3</sup>, ըստ որոնց համապատասխան մարմինները պետք է բարելավեն ընտրողների ռեգիստրի ճշգրտությունը և ձգտեն հասնել փոխհամաձայնության արդյունավետ լուծումների վերաբերյալ՝ անդրադառնալով հարատևող այն ընկալմանը, որ ընտրողների ցուցակներում Հայաստանից բացակայող քաղաքացիների ընդգրկվածությունը կարող է շահարկվել՝ ոյուրինացնելով բացակայող անձի փոխարեն քվեարկելը կամ այլ ընտրախախտումներ:

<sup>1</sup> <https://www.osce.org/hy/odhr/elections/armenia/26606?download=true>

<sup>2</sup> <https://www.osce.org/hy/odhr/elections/220951?download=true>

<sup>3</sup> <https://www.osce.org/hy/odhr/elections/220951?download=true>

Կրկնաքվեարկությունները կանխարգելող արդյունավետ միջոց կարող են հանդիսանալ ընտրողների նախագրանցումը մատնահետքերը վերցնելու միջոցով, ինչպես նաև քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակները որոնման հնարավորությամբ հրապարակելը:

Թեև ընտրական օրենսգրքով ներմուծվել է քվեարկության ժամանակ ընտրողների էլեկտրոնային գրանցման համակարգը, բայց, քանի որ գրանցման տեխնիկական սարքում ներբեռնված են միայն տվյալ տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքի ընտրողների ցուցակները, ապա այն չի բացառում կրկնաքվեարկության հնարավորությունը:

#### **Առաջարկություններ**

- Ընտրողների ռեգիստրը կազմել ըստ փաստացի բնակության հիմքի, կամ նախատեսել ընտրողների նախագրանցում՝ մատնահետքերի միասնական բազայի միջոցով:
- Օրենսդրորեն ամրագրել ստորագրած ցուցակները որոնման հնարավորությամբ հրապարակելու պահանջ:
- Միասնականացնել և ընտրողների էլեկտրոնային գրանցման տեխնիկական սարքում ներբեռնել հանրապետության բոլոր ընտրական տարածքների ընտրողների ցուցակները:

#### **4. Նախընտրական ծախսերի թափանցիկության ապահովում**

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն նախընտրական քարոզչության համար ձևավորվում են նախընտրական հիմնադրամներ, սակայն քարոզչության հետ կապված ոչ բոլոր ծախսերն են կատարվում հիմնադրամի միջոցների հաշվին: ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի նախկինում տրված հանձնարարականների համաձայն՝ նախընտրական հիմնադրամով կատարվող ծախսերը պետք է ընդլայնվեն՝ ներառելու մասնակցի քարոզչության հետ կապված բոլոր ծախսերը<sup>4</sup>: Գործող կարգավորմամբ նախընտրական քարոզչության հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված մի շարք ծախսեր, օրինակ՝ բեռնափոխ, մեքենաների վարձակալում, նախընտրական շտաբերի վարձակալության, շտաբի աշխատողների վարձատրություն, համերգների, մարզամշակութային միջոցառումների կազմակերպման հետ կապված մասնակիցների (դերասաններ, երգիչներ, ձևավորողներ և այլն) վճարները չեն ընդգրկվում հիմնադրամի միջոցների մեջ, հետևաբար դրանց վերաբերյալ տեղեկատվությունն առկա չէ: Մինչդեռ, օրենսդրական կարգավորումը պետք է լինի այնպես, որ քարոզչություն իրականացնելու հետ կապված բոլոր ծախսերը ներառվեն և ֆինանսավորվեն միայն նախընտրական հիմնադրամի միջոցներից ու ենթակա լինեն հրապարակման: Նախընտրական հիմնադրամների հրապարակայնության վերաբերյալ առկա է նաև ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ Փորձագիտական խմբի 2015թ. հանրաքվեի զեկույցը<sup>5</sup>:

#### **Առաջարկություններ**

- Ամրագրել քարոզչություն իրականացնելու հետ կապված բոլոր ծախսերը նախընտրական հիմնադրամում ներառելու և դրանք պարտադիր հրապարակելու պահանջ:

<sup>4</sup> <https://www.osce.org/hy/odhr/elections/91962?download=true>  
<sup>5</sup> <https://www.osce.org/hy/odhr/elections/220951?download=true>

## 5. Նախընտրական քարոզչության ծախսերի վերահսկողության ապահովում

Նախընտրական ծախսերի վերահսկողությունն իրականացվում է ԿԸՀ աշխատակազմում գործող վերահսկիչ-վերստուգիչ ծառայության միջոցով, որը, սակայն, չունի բավարար ռեսուրսներ և աշխատակազմ, ի վիճակի չէ արդյունավետ իրականացնել իր գործառնությունները, ուստի և դառնում է ձևական և միաժամանակ ԿԸՀ-ից կախված ինստիտուտ:

Այս առումով պետք է նշել, որ Եվրոպային խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից հստակ հանձնարարական էր ներկայացվել Վերստուգիչ հանձնաժողովի անկախության և արդյունավետության բարձրացման համար, սակայն օրենսգրքում կատարված միակ փոփոխությունը ծառայության անկախության մասին նշումն է, որը որևէ գործնական փոփոխության չի հանգեցրել<sup>6</sup>: Այս կառույցի հզորացման վերաբերյալ առկա է նաև 02.04.2017թ. Խորհրդարանական ընտրությունների հետ կապված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանձնարարականը, ըստ որի քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու համար Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը պետք է ունենա համապատասխան ռեսուրսներ, տեխնիկական փորձագիտական ուժ և անկախություն<sup>7</sup>:

### Առաջարկություններ

- Վերանայել Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կարգավիճակը՝ հանելով ԿԸՀ աշխատակազմից և տալ անկախ մարմնի կարգավիճակ (հնարավոր է նաև այլ առնչվող կառույցի շրջանակում):
- Օրենսդրորեն ընդլայնել ծառայության լիազորությունները (օրինակ, կուսակցությունների կողմից օրենսդրության խախտումների դեպքում վարույթներ հարուցելու իրավասություն, նախընտրական հիմնադրամների միջոցով գնված ապրանքների շուկայական արժեքների որոշում ընդունելու իրավասություն և այլն)՝ ապահովելով բավարար իրավական լծակներով և ռեսուրսներով:

## 6. ՉԼՄ-ների կողմից քարոզչությանը հավասար հնարավորությունների ապահովում

Հաշվի առնելով ՉԼՄ-ներով նախընտրական քարոզչության երբեմն կողմնակալ լուսաբանումը և/կամ թեկնածուների համար ստեղծվող անհավասար պայմանները, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեի փորձագիտական խմբի վերջնական զեկույցում,<sup>8</sup> ինչպես նաև 2017թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցում<sup>9</sup> առաջարկել է նախատեսել լրատվամիջոցների իրական (վերջնական և շահառու) սեփականատերերի և ֆինանսավորման վերաբերյալ համապարփակ և ժամանակին տեղեկատվություն հրապարակելու պարտադիր պահանջ:

Լրատվամիջոցի թափանցիկության ապահովման պահանջը դիտարկվում է ոչ միայն ընտրությունների համատեքստում, ուստի այս հանձնարարականի ապահովումը կարող է տեղ գտնել ինչպես ՀՀ ընտրական օրենսգրքում, այնպես էլ՝ ոլորտային օրենքում: Միաժամանակ, հիշյալ պահանջի կատարումը պետք է ապահովված լինի իրավական հետևանքներով, ընդհուպ մինչև լիցենզիայի կասեցում որոշակի ժամանակահատվածով

<sup>6</sup> [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2016\)031-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2016)031-e)

<sup>7</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true>

<sup>8</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>

<sup>9</sup> <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true>

կամ լիցենզիայից զրկում, եթե նախազգուշացումից հետո սահմանված ժամկետում ՉԼՄ-ն չի ապահովում օրենսդրական այս պարտականության կատարումը:

### **Առաջարկություն**

- ՀՀ ընտրական օրենսգրքում կամ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում ամրագրել լրատվամիջոցների իրական սեփականատերերի մասին տեղեկատվություն հրապարակելու պարտադիր պահանջ:

## **7. Քվեարկության գործընթացի պատշաճ վերահսկողության երաշխավորում**

2016թ. ընտրական օրենսգրքով ակնհայտորեն թուլացել են դիտորդի իրավական պաշտպանվածության հիմքերը: Նախ՝ դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրվելիս հասարակական կազմակերպությունները պետք է բավարարեն գործունեության 1 տարվա պահանջին: Նման սահմանափակումը որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում: Ավելին, ՀՀ-ների մասին գործող օրենքով յուրաքանչյուր ՀՀ ազատ է իր կանոնադրությանը համապատասխան գործունեություն իրականացնել առանց որևէ սահմանափակման: Բացի այդ, նման ձևակերպմամբ տարբերակված մոտեցում է ցուցաբերվում տեղական և միջազգային ՀՀ-ների նկատմամբ՝ վերջինիս դեպքում 1 տարվա պահանջը առկա չէ: Այս սահմանափակմանն անդրադարձել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը խորհրդարանական ընտրությունների իր վերջնական զեկույցում, նշելով, որ համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների, նորաստեղծ հասարակական կազմակերպություններին ընտրությունների դիտարկում իրականացնելու արգելքի մասին դրույթը պետք է վերանայվի, իսկ դիտորդների՝ հավատարմագրման համար դիմելու վերջնաժամկետը կարելի է սահմանել ընտրությունների օրվան ավելի մոտ<sup>10</sup>:

Խնդրահարույց է նաև դիտորդներին տեղամասից դուրս հանելու Օրենսգրքի նորամուծությունը, քանի որ ընտրական հանձնաժողովին իրավունք է վերապահվել ձայների 2/3-ով տեղամասից դուրս հանել դիտորդին, եթե վերջինս խախտել է ԸՕ-ի պահանջները: Փաստորեն, այս դրույթով հանձնաժողովին լայն հայեցողական լիազորություն է տրվել որակելու արարքներ որպես ԸՕ-ի խախտում և այդ հիմքով զրկելու հավատարմագրված դիտորդին իր առաքելությունն իրականացնելու հնարավորությունից: Բացի այդ դիտորդը ենթակա է տեղամասից հեռացման, եթե հանձնաժողովը ձայների առնվազն 2/3-ով որոշի, որ տեղամասում դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը: Ընդ որում, այս կանոնը չի տարածվում միջազգային դիտորդների նկատմամբ, ինչը խտրական կարգավորում է:

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն նաև միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները՝ հրավերի առկայության դեպքում: Միաժամանակ, սահմանված է հրավեր ուղարկող պետական մարմինների/անձանց ցանկը: Սակայն ՀՀ ընտրական օրենսգրքի կարգավորումներից պարզ չէ՝ այս կազմակերպություններն ինչպես և ինչ ժամկետում պետք է դիմեն պետական իրավասու մարմիններին հրավեր ստանալու համար, իսկ վերջիններս քանի օր առաջ կամ ինչ ժամկետում պետք է ապահովեն հրավերի

<sup>10</sup> <https://www.osce.org/hy/odhr/elections/armenia/333491?download=true>

տրամադրումը կամ մերժումը: Առկա չեն նաև հրավերի մերժման օրենսդրական հիմքերը, ինչը գործնականում կամայականությունների տեղիք է տալիս: Մասնավորապես, 2017թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում ԿԸՀ-ն մերժվեց միջազգային ճանաչում ունեցող երկու դիտորդական կազմակերպությունների՝ EPDE-ին (European Platform for Democratic Elections) և ENEMO-ին (European Network for Elections Monitoring Organizations) հրավեր ուղարկելու առաջարկը՝ պատճառաբանելով, որ հավատարմագրված դիտորդների թիվն արդեն իսկ բարձր է<sup>11</sup>:

Խնդրահարույց է նաև այն հարցը, որ հրավեր տրամադրելու իրավունքը վերապահված է միայն պետական մարմիններին՝ հասարակական կազմակերպություններին զրկելով իրենց միջազգային կամ օտարերկրյա գործընկերներին հրավիրելու հնարավորությունից:

Վերջին տարիների մի շարք համապետական և տեղական ընտրական ընտրություններ բացահայտեցին, որ դիտորդական առաքելությունները հաճախ լուրջ չեն ընկալվում որպես հանրային վերահսկողության գործիք: Հաճախ ձևավորվում են կեղծ դիտորդական առաքելություններ՝ հետապնդելով տարբեր նպատակներ համար, ինչպես օրինակ՝ ընտրողներին ուղղորդումը 2017թ. ապրիլի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Կեղծ դիտորդությունը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է որոշակի պարտավորություններ սահմանել դիտորդական առաքելությունների համար, օրինակ՝ որոշակի ժամկետներում ներկայացնել իրենց դիտորդության արդյունքները զեկույցների տեսքով:

### **Առաջարկություններ**

- Վերացնել դիտորդների հավատարմագրման համար գործունեության 1 տարվա պահանջը.
- Վերացնել ձայների 2/3-ով դիտորդին տեղամասից դուրս հանելու ընտրական հանձնաժողովի իրավունքը:
- Վերացնել դիտորդների թիվը տեղամասում սահմանափակելու հանձնաժողովի իրավունքը:
- Ամրագրել միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների կողմից հրավերի համար դիմելու և դրանց արձագանքելու ժամկետները, ինչպես նաև հրավերի մերժման հիմքերը:
- Իրավունք վերապահել տեղական ՀԿ-ների հրավեր ուղարկելու օտարերկրյա հասարակական կազմակերպություններին:
- Ամրագրել տեղական դիտորդական կազմակերպությունների կողմից 3-ամսյա ժամկետում իրենց զեկույցները հրապարակման համար ԿԸՀ ներկայացնելու պահանջ:

### **8. Զվեարկության գործընթացի պատշաճ լուսաբանման ապահովում**

Ընտրական օրենսդրությամբ երբևէ նախատեսված չի եղել ՉԼՄ-ների հավատարմագրում՝ ընտրությունները լուսաբանելու համար: 2016թ. ընտրական օրենսգրքով առաջին անգամ ոչ միայն սահմանվեց ՉԼՄ-ի հավատարմագրումը, այլև ներմուծվեցին հավատարմագրման համար անհրաժեշտ որոշ արգելապատնեշներ և սահմանափակումներ, այն է՝ առնվազն մեկ տարի ՉԼՄ-ն իր անունից տարածում է լրատվության միջոց: Ընդ որում, մեկ տարվա

<sup>11</sup> ԺԸԵՊ-ը դատապարտում է ՀՀ կառավարության մերժումը՝ ընտրություններին միջազգային քաղաքացի դիտորդներ հրավիրելու առնչությամբ, մարտ 2017 <https://transparency.am/hy/news/view/1894>

սահմանափակումը կիրառելի չէ, եթե լրատվական գործունեություն իրականացնողը լրատվության միջոց է տարածում վերգետնյա եթերային հեռարձակմամբ, ինչը խտրական կարգավորում է: Բացի այդ, ընտրական հանձնաժողովին իրավունք է վերապահվել ձայների 2/3-ով տեղամասից դուրս հանել ՉԼՄ ներկայացուցչին, եթե վերջինս խախտել է ԸՕ-ի պահանջները: Մեկնաբանման նման լայն հայեցողություն տալով հանձնաժողովին՝ սահմանափակվում է ՉԼՄ-ի գործունեության ազատությունը և թուլանում են ՉԼՄ ներկայացուցչի իրավական պաշտպանվածության հիմքերը: Օրենսգրքի նորամուծություններից է նաև այն, որ եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը, որը չի կարող նվազ լինել 15-ից: Ընդ որում, այս սահմանափակումը չի տարածվում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչների վրա, ինչն ինքնին խտրական կարգավորում է՝ ՉԼՄ-ի գործունեության տեսակով պայմանավորված:

### **Առաջարկություններ**

- Վերացնել ՉԼՄ հավատարմագրման համար գործունեության 1 տարվա պահանջը:
- Վերացնել ձայների 2/3-ով ՉԼՄ ներկայացուցչին տեղամասից դուրս հանելու ընտրական հանձնաժողովի իրավունքը:
- Վերացնել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվը տեղամասում սահմանափակելու հանձնաժողովի իրավունքը:

### **9. Քվեարկության գործընթացի և արդյունքների բողոքարկման արդյունավետության ապահովում**

ՀՀ ընտրական օրենսգրքով խիստ սեղմ է բողոքարկման սուբյեկտների շրջանակը և արհեստականորեն նեղացված է բողոքարկման առարկայի շրջանակը: Դիտորդը չի կարող բողոքարկել ընտրական հանձնաժողովի այն գործողությունը կամ անգործությունը, որն անմիջականորեն չի առնչվում իր՝ դիտորդի իրավունքներին, բայց որը կարող է լինել ընթացակարգային կոպիտ խախտում: Բացի այդ, դիտորդն իրավունք չունի նաև վիճարկել իր դիտարկած տեղամասի քվեարկության արդյունքները: Մինչդեռ վստահված անձը, դիտորդը և հանձնաժողովի անդամը պետք է իրավունք և հնարավորություն ունենան բողոքարկելու իրենց տեղամասի ընթացակարգային խախտումները կամ խախտումներով ընթացող քվեարկության արդյունքները:<sup>12</sup> Բողոքարկման սուբյեկտ չէ նաև որպես դիտորդ հավատարմագրված հասարակական կազմակերպությունը և որևէ հիմքով չի կարող հայց հարուցել նույնիսկ իր դիտորդների իրավունքների պաշտպանության:

Սահմանափակող բնույթ են կրում թեկնածուի և վստահված անձի կողմից վերահաշվարկի դիմում ներկայացնելու կարգավորումները, քանի որ Օրենսգրքով նախատեսված է, որ վերահաշվարկի դիմում վերջիններս կարող են ներկայացնել, եթե ներկա են եղել ընտրական

<sup>12</sup> Ավելի արդյունավետ քննություն երաշխավորելու համար բողոքների և դիմումների իրավական շրջանակները պետք է վերանայվեն: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ Հանրաքվեի Փորձագիտական խմբի Վերջնական Ձեկույց 05.02.2016, Վարչավա <https://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>

տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչը բողոքարկման գործընթացի համար լուրջ խոչընդոտ է:

Բացի այդ, առկա իրավական կարգավորումներն այնպիսին են, որ ընտրական տեղամասում անճշտությունների զգալի չափն անգամ հիմք չէ տվյալ տեղամասում վերահաշվարկի կամ քվեարկության արդյունքները չեղյալ հայտարարելու համար: Մինչդեռ անհրաժեշտ է սահմանել, որ որոշակի տոկոս (կամ ինչ որ շեմ) անճշտությունների դեպքում օրենքի ուժով տվյալ տեղամասի արդյունքներն անվավեր են ճանաչվում:

### **Առաջարկություններ**

- Վերանայել ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկելու ժամկետները, բողոքարկման առարկայի և սուբյեկտների շրջանակը՝ ներառելով վստահված անձանց, դիտորդներին և վերջիններիս հավատարմագրված ՅԿ-ներին:
- Սահմանել թեկնածուի կողմից վերահաշվարկի դիմում ներկայացնելու իրավունքը՝ անկախ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա լինելու փաստից:
- Սահմանել անճշտությունների որոշակի շեմ, որի դեպքում օրենքի ուժով տվյալ տեղամասի արդյունքներն անվավեր են ճանաչվում:

## **10. Ընտրական հանցագործությունների համար պատասխանատվության երաշխավորում**

Գործող Օրենսգիրքը սահմանում է, որ եթե ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմումի քննարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա տարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն:

Այս կարգավորումը հանձնաժողովին իրավունք է տալիս լայն հայեցողությամբ գնահատել և մեկնաբանել «էապես ազդել» եզրույթը, մինչդեռ ընտրական հանձնաժողովը պետք է պարտավորված լինի հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող կամ նման պնդման նյութերը ցանկացած դեպքում ուղարկել դատախազություն: Բացի այդ ՅԿ քրեական օրենսգրքի ընտրական հանցագործություններին վերաբերող հոդվածներում ընտրությունների ելքի վրա ազդելը կամ էապես ազդելը որպես հանցակազմի տարր նշված չէ:

Մեկ այլ խնդիր ևս, որը վերաբերում է ուրիշի փոխարեն քվեարկելու դեպքերի բացահայտմանը. 2016թ. հոկտեմբերի 20-ին ՅԿ Քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում նախատեսվեց քրեական պատասխանատվություն այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու համար, ընդ որում ինչպես դիտավորյալ, այնպես էլ անփութությամբ գործելիս: (հոդված 154.8): Այս



կարգավորումն ակնհայտորեն սահմանափակում է ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման արդյունքում բացահայտված ընտրակեղծիքի վերաբերյալ հաղորդումների ներկայացման հնարավորությունը՝ ըստ էության չեզոքացնելով ցուցակների հրապարակման դրական ազդեցությունը հանրային վերահսկողության տեսանկյունից:

Թեև նոր Քրեական օրենսգրքի նախագծում այս հոդվածը տեղ չի գտել, բայց քանի դեռ նախագծի ընդունման ժամկետներն անորոշ են, ուստի գործող օրենսգրքի հիշյալ հոդվածը անհրաժեշտ է ապաքրեականացնել:

### **Առաջարկություններ**

- Ամրագրել հանցագործության առերևույթ հատկանիշներ կամ նման պնդում պարունակող նյութերը ընտրական հանձնաժողովի կողմից դատախազություն ուղարկելու պարտադիր պահանջ
- Ուժը կորցրած ճանաչել 33 Քրեական օրենսգրքի 154.8-րդ հոդվածը: